ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան 7 հունիսի 2021 թ.

Ս.թ. հունիսի 7-ին տեղի ունեցավ «Հայկ» կինոստուդիայի գեղարվեստական խորհրդի առցանց հարցում: Օրակարգում՝ 2021 թ. կինոտարեգրության, 2020-2021 թթ. անցողիկ և 2022 թ. տեղափոխված ֆիլմերի նախահաշիվների քննարկման հարցն էր: Հարցմանը մասնակցել են գեղարվեստական խորհրդի նախագահ Հայկ Օրդյանը, անդամներ Վալերի Գասպարյանը, Աննա Երզինկյանը, Արթուր Ղուկասյանը, Գագիկ Ստեփանյանը, Վահագն Հակոբյանը և հրավիրված «Հայկ» կինոստուդիայի տնօրենի պաշտոնակատար Ծովինար Սողոմոնյանը:

Ծ. Սողոմոնյանը ծանոթացրել է գեղխարհրդի անդամներին քննարկվող հարցին:

– Ինչպես ձեզ հայտնի է, մենք ունենք 2020-2021 թթ. անցողիկ 5 ֆիլմ: Այդ ֆիլմերի 2020 թ. աշխատանքները կատարված են, և 2021 թ. պետք է այդ ֆիլմերն ավարտվեին: Սակայն 2021 թ. ֆիլմարտադրության ֆինանսավորումը կրճատվել է ավելի քան 50 %-ով և մենք ստիպված ենք աշխատանքների մի մասը տեղափոխել 2022 թ.: Ֆիլմերի տնօրենները կազմել են նոր նախահաշիվներ և ելնելով տարբեր հանգամանքներից, դրանց գումարները փոքր-ինչ տարբերվում են նախորդ՝ 2020 թ.-ին ներկայացված նախահաշիվների գումարներից: Այսպես ուրեմն.

«Թառիստը, Այան և տիկնիկները» – գումարը չի փոփոխվել, քանի որ մնացել են միայն հետարտադրական աշխատանքները:

«Զինվորի օրագիրը» – Ֆիլմը 2021 թ. ընդամենը 1 ամիս է, ուստի այս տարի պետք է ավարտվի: Գումարային փոփոխությունը տեղի է ունեցել դոլարի փոխարժեքի փոփոխման հետևանքով (գործուղում Վրաստան), ուստի 7411,0 հազ. դրամը դարձել է 7409,6 հազ. դրամ:

Կինոտարեգրություն – Քանի որ 2021 թ. մեր երկիրը ցնցումների մեջ է և բուռն իրադարձություններով հագեցած, անհրաժեշտություն է առաջացել ֆիլմի գումարն ավելացնելու՝ 2707,0 հազ. դրամի փոխարեն, ֆիլմին հատկացվել է 4558,9 հազ. դրամ:

«Հանրապետության հրապարակ» – 2021 թ. նախատեսված է եղել 7374,0 հազ. դրամ, իսկ այժմ ֆիլմի աշխատանքների մի մասը տեղափոխվել է 2022 թ. և 2021 թ. իրադարձությունների հետ կապված անհրաժեշտություն է առաջացել նոր գործուղում մտցնելու, ուստի տեղի է ունեցել գումարային փոփոխություն և ֆիլմի գումարը բաշխվել է հետևյալ կերպ՝ 2021 թ. – 3 909,7 հազ. դրամ, 2022 թ. – 3 813,5 հազ. դրամ, ընդհանուր գումարը – 7 723,2 հազ. դրամ:

«Արյան հարկ» – ֆիլմն ամբողջությամբ տեղափոխվել է 2022 թ., գումարը փոփոխվել է դոլարի փոխարժեքի տատանման պատճառով (գործուղում արտասահման)՝ 6450,0 հազ. դրամը դարձել է 6647,9 հազ. դրամ:

«Շահի լուսանկարիչը» – ֆիլմն ամբողջությամբ տեղափոխվել է 2022 թ., գումարը փոփոխվել է եվրոյի փոխարժեքի տատանման պատճառով (գործուղում արտասահման)՝ 3085,5,0 հազ. դրամը դարձել է 3274,2 հազ. դրամ:

Խնդրում եմ ներկայացնել ձեր կարծիքը վերը նշված հարցի վերաբերյալ:

Հ. Օրդյան – Կարծում եմ, որ իրոք այս փոփոխություններն անհրաժեշտ են և հիմնավորված, ներկայացված նախահաշիվներն էլ ընդունելի են :

Գ. Ստեփանյան – Գտնում եմ, որ «Շահի լուսանկարիչը» «Հանրապետության հրապարակ», «Արյան հարկ» և «Զինվորի օրագիրը» անցողիկ ֆիլմերի, ինչպես նաև Կինոտարեգրության գծով ստուդիայի կողմից ներկայացվող նախահաշիվային փոփոխությունները արդարացված են և հաստատման համար անհրաժեշտ:

Ա. Երզինկյան – Համաձայն եմ ներկայացված նոր նախահաշիվների հետ:

Վ. Հակոբյան – Գնահատելով և հասկանալով ստեղծված իրավիճակը, կարծում եմ այս որոշումը միակն է: Ես տալիս եմ իմ համաձայնությունը և ստորագրում:

Ա. Ղուկասյան – Համաձայն եմ: Կարծում եմ անհրաժեշտ է կատարել այդ փոփոխությունները

Վ. Գասպարյան – Կատարված փոփոխությունները կարելի է համարել ընդունելի:

Գեղարվեստական խորհուրդը որոշեց. Ընդունել 2021 թ. կինոտարեգրության, 2020-2021 թթ. անցողիկ և 2022 թ. տեղափոխված ֆիլմերի փոփոխված նախահաշիվները:

Գեղարվեստական խորհրդի նախագահ՝ Հ. Օրդյան

անդամներ՝ Ա. Երզինկյան

Գ. Ստեփանյան

Ա. Ղուկասյան

Վ. Գասպարյան

Վ. Հակոբյան